



Զապել Եսայան

Միլիտարի պարտեզները

«Ազատն աստուած այն օրից» եւ այբուբեն

Երբ կը մտաբերեմ մանկութեան առաջին տարիներս, յիշողութեանս բեկորներ կը ներկայանան մտքիս արտակարգ պայծառութեամբ:

Եղբայրս ծնած է ու մեռած է երկու ամսու, կը յիշեմ իր ճերմակ սնդուսէ դագաղը, սեղանին վրայ:

Չորս տարեկան էի, երբ քոյրս ծնաւ եւ արդէն որոշակի կը յիշեմ յոյն դայեակը, տնեցիներուն իրարանցումը եւ յուսախաբութիւնը, որովհետեւ մանչի մը կը սպասէին:

Յետոյ պտոյտներ Թոփիանէ օղլուի պողոտայէն դէպի սրճարան մը, ուր հայրս նարկիլէ կը ծխէր եւ մօրս հետ քաղցրութեամբ կը խօսէր: Ես կը թափառէի պարտեզին շուրջ բոլորը, չուան կը ցատկէի, կը խօսէի կոնկենիի ծաղիկներուն հետ, որոնք ինձ կը թուէին արտակարգ էութիւններ:

Բայց կը յիշեմ մանաւանդ հիւանդութեան շրջաններ, երբ կանխահաս մանուկի խորաթափանց մտքով կը զգայի շրջապատիս մտահոգութիւնները եւ բժիշկին խոժոռ լրջութեան իմաստը: Դեռ կը զգամ հօրս գով ձեռքին հպումը տենդագին ճակատիս վրայ, եւ անոր անձկալի դէմքը, որ ժպտուն կը դառնար, երբ աչքերս անորոշ արհաւիրքով լի յանկարծ կը հանդիպէին իր նայուածքին:

Մահը եւ կեանքը կը պայքարէին իմ փոքրիկ էութեանս մէջ եւ քիչ անգամ այդ պայքարը կանգ կ'առնէր:

Այդպիսի շրջան մըն էր անշուշտ այն աշնանային իրիկունը, երբ հայրս պարտէզին վրայ նայող սենեակի մը փսիաթը կը տարածէր եւ պատերուն ստորոտը փայտի ձողիկներով կը գամէր: Մուրճի համաչափ հարուածները կ'օրօրէին միտքս: Մայրս, մօտս նստած, լռին կը հետեւէր հօրս աշխատութեան:

Դուրսը աշնանային վերջալոյսը կը բոցավառէր երկինքը. իմ տեսողութեան հեռաւոր կէտին վրայ նոճի մը մեղմօրէն կ'օրօրուէր: Յանկարծ թոթով լեզուով սկսայ արտասանել.

Ագառն Աստուած այն օրից

Երբ հաճեցաւ շունչ փչել,

Իմ հողանիւթ շինուածքին

Կենդանութիւն պարգեւել...

Ես անբարբառ մի մանուկ

Երկու ձեռքս պարզեցի...

Հայրս զարմացած թողուց գործը, եկաւ ինձ մօտ, գիրկը առաւ եւ սկսաւ եռանդով խօսիլ մօրս հետ եւ ահա գոյգ մը արցունքի կաթիլներ սահեցան մօրս այտերուն վրայէն...

Այդ ոտանաւորը հայրս կարդացել էր քանի մը անգամ հօրեղբօրս տղուն սորվեցնելու համար եւ ան դրոշմուեր էր իմ մտքիս մէջ աննկատելի կերպով:

Նոյն տարուան ձմեռը չորս տարեկան էի, երբ կարդայ սորվեցայ: Մութը իջնալէն յետոյ, հայրս կը դառնար տուն, կը լուացուէր, զգեստները կը փոխէր եւ սամոյր մուշտակը հագած կը նստէր ցած բազմոցի մը վրայ, որուն առաջ դրուած էր պղնձէ մանգալը: Կրակարանին մէջ, եռոտանիի վրայ, ջուրը կ'եռար թէյի համար:

Այն ժամանակ թէյի գործածութիւնը տարածուած չէր Պոլսոյ մէջ, բայց հայրս այդ սովորութիւնը բերեր էր Կովկասէն: Ինքն իր ձեռքովը կը պատրաստէր թէյը, կը լեցնէր բաժակներու մէջ, հարկ եղած բոլոր արարողութիւնները ընելով: Մինչեւ թէյի ջուրին եռալը. հայրս կը բանար օրուան թերթը, «Արեւելք»ը, եւ կը կարդար: Ես կը նստէի գիրկը եւ հայրս մուշտակի փէշը կը ծածկէր իմ վրաս: Այդ տաքուկ բոյնին մէջ երանութեան ժամեր կ'անցունէի եւ աչքերովս կը հետեւէի թերթի տատերուն: Երբեմն մատս կը դնէի տառի մը վրայ եւ հօրս կը հարցունէի: Ան կ'ընդհատէր ընթերցանութիւնը եւ կը պատասխանէր: Յաճախ մայրս կամ մօրաքոյրերէս մէկը կը միջամտէր.

– Հայրդ հանգիստ ձգէ, մերաքը մի՛ հաներ:

Բայց հայրս ձեռքով նշան կ'ընէր որ ինքը հանգիստ է եւ, աւելի սեղմ գրկելով ինձ, մեծ համբերութեամբ գոհացում կու տար իմ հետաքրքրութեանս:

Եւ օր մըն ալ կարդացի: Հայրս չկրցաւ հաւատալ որ իրաւամբ կը կարդամ: Թերթին զանազան էջերուն վրայ տատեր կը մատնանշէր եւ ես հեգելով եւ դեռ թոթով լեզուով կը կարդայի:

Եւ այլեւս ամենուրեք, ուր տատեր տեսնէի, միտքս կը մտնէր գործունէութեան մէջ, մինչեւ չարաչար յոգնէի: Յաճախ կ'ունենայի տաքութիւն: Գլուխս կը ծանրանար, ախորժակս ի սպառ կը կորսուէր եւ այն ինչ որ ուրախութիւն պիտի պատճառէր ծնողքիս, կը դառնար մտահոգութեան եւ թախիծի առիթ:

Աւելի ուշ ինձ յայտնած են որ բժիշկը կասկած յայտնած է թէ ենթակայ եմ ուղեղատապի եւ թէ իմ կանխահաս միտքս ախտանշաններէն մէկը կը համարէր այդ հիւանդագին տրամադրութեան:

«Անի քաղաք նստեր կուլայ...»

Դարձեալ հիւանդ պատկած եմ բազմոցի անկիւնը: Վզիս գեղձերը բորբոքած են եւ թարախտած ուռուցք մը կը հարկադրէ ինձ գլուխս հակած պահել մէկ ուսիս վրայ:

Ցաւի կոտորուկներ եւ բելլադոնի խիւսի հոտը... Կարծես երբեք պիտի չազատիմ այդ ցաւերէն եւ այդ զգուելի հոտէն:

Ձիւն ձմեռ է: Անկիւնի պատուհանէն կը դիտեմ փողոցը, որ կը բարձրանայ դէպի Սելիմիէ: Ցանցառ անցորդներ, վերարկուի օձիքը բարձրացուցած, ֆէսը քաշած ականջներուն, կը սահի պատերու երկայնքին: Շուներ սրսփալով կը կաղկանձեն եւ ապաստան կ'որոնեն տուներու մէկ սեմէն միւսը անցնելով:

Յանկարծ գանազան տարիքի երեխաներ կը յայտնուին փողոցին մէջ: Հայոց դպրոցէն նոր արձակուեր են, վազելով կը սահին ձիւներու վրայէն, հակառակ որ բեռնատրուած են գիրքերուն պայուսակներով եւ սիթիլներով: Անոնք չեն շտապեր տուն, կը խմբուին, կողմեր կը կազմեն եւ պայուսակ ու սիթիլ մէկ կողմ դրած անձնատուր կ'ըլլան ձիւնագնդակի խաղին: Գոռում-գոշումը կը բռնէ փողոցը, սուր ճիչեր եւ կոչեր կու գան կը զարնուին մինչեւ իմ պատուհանիս, որուն մէկ քառորդը ծածկուած է ձիւնեղէն թաղիքով:

Ցաւս մոռցած, բոլոր հոգուովս կը հետեւիմ այդ տղոց խաղին... ինչքա՛ն պիտի ուզէի իրենց հետ ըլլալ: Ես ալ շտապ-շտապ կազմէի ձիւնէ գնդակներ, արձակէի մէկին եւ միւսին, թաւալէի ձիւներուն մէջ, ծիծաղէի, վազէի, վազվզէի:

Բայց մեծերը չեն հասկնար այդ բաները: Վաղը պիտի ենթարկուիմ վիրաբուժական գործողութեան եւ կը կարծեն որ այդտեղ պատուհանին առաջ կը մսիմ. կ'ուզեն ինձ տանիլ պառկեցնել անկողինս, ծածկել վարագոյրները եւ Իդաբեր մօրաքոյրս ինձ կը համոզէ ողորհիչ խօսքերով:

Ամեն իրիկուն Իդաբեր մօրաքոյրոջս պաշտօնն է ինձ քնացնել, եւ այդ նպատակին հասնելու համար ան իր բեկ-բեկ ձայնով կ'երգէ.

Անի քաղաք նստեր կու լայ,

Չկայ ըսող մի՛ լար, մի՛ լար...

Այդ ողբագին երգը յուսահատութիւն կը պատճառէ ինձ: Անորոշ, բայց թանձր տխրութիւն մը կ'ընկճէ հոգիս. կ'ուզեմ գոչել, աղաղակել որ այդ տխրութիւնը փարատի, բայց փորձով գիտեմ որ աւելի դիւրին միջոց կայ ազատագրուելու այդ երգէն: Աչքերս կը փակեմ եւ քնանալ կը ձեւացնեմ եւ Իղաբեր մօրաքրոջս ձայնը հետզհետէ կը մեղմանայ եւ վերջապէս կը մարի: Ան գգուշութեամբ վերմակը կը ծածկէ ուսերուս եւ յուշիկ քայլերով կը հեռանայ:

Ու երբ կը զգամ թէ առանձին եմ ննջասենեակին մէջ, աչքերս խոշոր կը բանամ... կանթեղին տկար եւ քթոդ լոյսով կը տեսնեմ որ ստուերներ կ'երկարին սենեակին մութ անկիւններէն եւ կը խուժեն դէպի ինձ. ուրուականային սիլուէթներ կը յաճին օդին մէջ, որ հիւանդագին երեւակայութիւնս մէկիկ-մէկիկ կ'արձակէ սենեակին մէջ. եւ երբ սարսափէ կարկամած, աչքերս կը փակեմ, կը տեսնեմ Անի քաղաքը, որ նստեր կու լայ աւերակներու մէջ: Տեսեր եմ ազգականի մը տունը պատկեր մը, բայց իմ երեւակայածը, Անի քաղաքը հերարձակ եւ գեղեցիկ կին մը չէ, այլ որողմելի մարդ մը անճար, անմխիթար:

Եւ կողքի սենեակը լոյս է եւ տաք: Դրան ծերպերէն լոյսի գիծ մը ինձ կը յայտնէ այն դրախտը, որուն դուռը փակուած է ինձ համար: Իմ սիրելի հայրիկս անկիւնը նստած թերթ կը կարդայ... Կատուն, պոչը հաւաքած փորին վրայ, աչքերը կիսախուփ կը մոմոյ կրակարանին քով... Մայրս եւ մօրաքոյրերս կը շողակրատեն: Անոնց խառն ձայնը կը հասնի ինձ երբեմն: Ինչքա՛ն կը սիրեմ ձայներու այդ ջերմութիւնը, որ իրարու միացած դաշն համերգ մը կը կազմէ... Բայց այդ բոլորը արգիլուած է ինձ համար եւ եթէ ահաբեկեալ լռութիւնս խզեմ եւ ձայն բարձրացնեմ, Իղաբեր մօրաքոյրս պիտի գայ նորէն ինձ մօտ, դուռը ետեւէն փակելով եւ պիտի երգէ «Անի քաղաք նստեր կու լայ...», որովհետեւ մեծերը համոզուած են որ ես միայն այդ երգով կը քնանամ, շուտ մը աչքերս կը գոցեմ:

Եւ հիմա, որ Իղաբեր մօրաքոյրս, գլուխը աջէն ձախ շարժելով – ջղային շարժում, որ երբեք չէր դադրեր – ինձ կը համոզէ որ ննջասենեակ երթամ ու պառկիմ, յուսահատօրէն կը բողոքեմ: Մեծ մայրս, որ սենեակն է, կը միջամտէ.

– Դեռ կանուխ է, լոյս է, շոջուխը ձգէ՛:

Կրկին հիւանդ գլուխս կը դարձնեմ դէպի անկիւնի պատուհանը: Մթնշաղը կ'աղօտացնէ սթնուորսը: Ձիւնը անելի խիտ եւ անելի արագ կը տեղայ: Մարդ մը կը բարձրանայ գառիվերը: Մէկ ձեռքով բռնած է դոյլի նման վառարան մը եւ միւս թեւին տակ կը կրէ գործիքները: Մանրուք եւ կորաքամակ մարդ է, ծռած սրունքներով: Ան հրեայ շրջուն թիթեղագործն է որ փողոցէն անցնելով, տուներու դրան առաջ, անագով կը նորոգէ պղինձները եւ կամ նաւթի թիթեղեայ տուփերով կը շինէ զանազան ամաններ: Աղքատիկ արհեստաւոր է, աղքատիկ յաճախորդներու համար:

Աչքերս կը հետեւին մարդուն քալուածքին, որ դժուարաւ կը բարձրանայ գառիվերը: Քամին առագաստի պէս կը բանայ վերարկուին փէշերը եւ ան չի կրնար հաւաքուիլ, որովհետեւ ձեռքերը ազատ չեն: Քամին ա՛լ անելի թափով կը մոնչէ ու ձիւնեղէն փոշի մը բարձրացնելով գետնէն ցուրտ մշուշի մը մէջ կը ծածկէ ծռած սրունքներով մարդը, որուն թիթեղեայ վառարանի ծակոտկէն մասերէն կայծեր դուրս կ'ելլեն:

Յանկարծ փողոցի տղաքը կը թողուն իրենց խաղը, կը յարձակին թիթեղագործին վրայ եւ ակնթարթի մը մէջ կը տեսնեմ որ մարդը գետին տապալած է, գործիքները նետուած են ասդին-անդին եւ վառարանին կրակները ցրուած են ձիւներուն մէջ: Մարդը, նստած աներակներուն մէջ, ձեռքերը գլուխին ու ծունկերուն զարնելով կ'ողբայ, մինչ տղաքը վայրենօրէն խնդալով եւ աղմկելով կը հեռանան եւ կ'անհետին կողմնակի փողոցներուն մէջ:

Այդ տեսարանը աղիքներս կը գալարէ սուր ցաւով ու բոլոր ուժովս կը գոռամ:

Մայրս, մօրաքոյրերս, մեծ մայրս կու գան դէպի ինձ, կը շրջապատեն, կը հարցուփորձեն:

Իմ մանկական հոգիս իր ամբողջ ուժովը կ'ընթաստանայ կատարուած խուժդուժութեան դէմ... եւ յետոյ, այդ մարդը, որ կը շարունակէ ողբալ իր ցրուած գործիքներուն եւ տապալուած կրակարանին քով, ինձ համար Անի քաղաքն է որ նստեր կու լայ... Իմ կրած ուժգին զգացումներուս ազդեցութեան տակ արցունքը

կը ժայթքէ աչքերէս եւ վերջապէս ձեռքովս ցոյց կու տամ ինձ յուզող տեսարանը:

Այն աստեն, շուրջս եղողները կը հասկնան եւ մեծ մայրս կ'ըսէ.

– Ես արո՛ւմ, ինչո՞ւ սիրտդ վեր կը հանես, ան եահուտի է... եահուտի՛...

Եւ որովհետեւ, չհասկնալով այդ բառերուն իմաստը, աղիողորմ ակնարկով կը նային մեծերուն, օգնութիւն աղերսելով անոնցմէ, մեծ մայրս կը բացատրէ.

– Անոնք Քրիստոսը չարչարեցին, խաշը հանեցին, այդ մեղքն է որ կը քաւեն...

Ո՛չ, ո՛չ, իմ մատղաշ հոգիս չ'ամոքուիր այդ խօսքերով եւ առաջին անգամ թիթեղագործ անձանօթ հրեան իմ մէջ կ'արթնցնէ գթութեան տանջալի եւ անագորոյն զգացումը:

Տասը տարեկան էի, երբ օր մը, վերլիշելով այս դէպքը, հարցուցի հայրիկիս, որուն կարծիքը արդէն հեղինակութիւն էր ինձ համար:

– Ճի՞շտ է որ եահուտիները գէշ են:

Իմ սիրելի հայրիկս, իր պայծառ աչքերը դարձնելով ինձ, ըսաւ խաղաղութեամբ.

– Աղջի՛կս, չկայ գէշ ժողովուրդ այս աշխարհիս վրայ: Կան գէշ մարդիկ եւ լաւ մարդիկ:

– Հապա թուրքե՞րը:

– Նո՛յնպէս: